Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № ՏԷ-

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք.Իջևան

«ՏԱՎՈՒՇԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Մատակարար ի դեմս տնօրեն Նիկոլայ Ղալթախչյանի, ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ և ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող հանձնաժողովի կողմից 10.09.2025թ. տրված ԼԷ N 0829 լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից և «_____»ՍՊԸ այսուհետ՝ Սպառող, ի դեմս տնօրեն _____ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող հանձնաժողովի հաստատած՝ Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ ԷՄԱ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1) Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:
2) Էլեկտրական էներգիայի արժեքը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են սույն պայմանագրին կից հավելված N1-ով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Մատակարարը պարտավոր է՝

1) Սույն պայմանագրին կից հավելված N1-ով նախատեսված ժամկետում ներկայացնել հարկային հաշիվ՝ ներառելով սպառված էլեկտրաէներգիայի քանակը և ընդհանուր արժեքը:
2) Սպառողին տրամադրել տեղեկատվություն՝ մատակարարած էլ. էներգիայի քանակի և դրա դիմաց կատարած վճարումների վերաբերյալ եթե վերջինս նման պահանջ է ներկայացրել, պատասխանել սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՝ դիմումը ստանալուց հետո՝ (բացառությամբ՝ բանավորի) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրին կից հավելված N1-ով սահմանված կարգով և ժամկետում

2) ԷՄԱ կանոնների համաձայն դիմել բաշխման լիցենզիա ունեցող կազմակերպությանը (այսուհետ Բաշխող)՝ էլեկտրաէներգիայի մատակարարումը դադարեցնելու պահանջով սպառած էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրին կից հավելված N1-ով սահմանված ժամկետին հաջորդող 10 (տաս) օրացույցային օրվա ընթացքում Սպառողի կողմից ամբողջական վճարում չկատարելու դեպքում:

2.3. Սպառողը պարտավոր է՝

1) Վճարել Մատակարարի կողմից հարկային հաշվով ներկայացված ամբողջ գումարը սույն պայմանագրին կից հավելված N1-ով սահմանված կարգով և ժամկետում:
2) Աշխատանքային ռեժիմների փոփոխման, գործունեության դադարեցման, օգտագործվող հզորությունների ավելացման կամ պակասեցման դեպքում նախապես բանավոր կարգով տեղեկացնի Մատակարարին:

2.4. Սպառողն իրավունք ունի՝

Մատակարարից պահանջել տրամադրել իրեն մատակարարած էլ. էներգիայի քանակի և դրա դիմաց կատարած վճարումների վերաբերյալ տեղեկատվություն:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Փաստացի սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է սույն պայմանագրին կից հավելված N1-ում նշված ժամկետներով՝ Սպառողի և Բաշխողի հետ կնքված պայմանագրին կից հավելվածում ամրագրված էլեկտրաէներգիայի հաշվառման կետերի առևտրային (վերստուգիչ) հաշվիչներով և չափիչ տրանսֆորմատորներով, որոնք հաշվառվում են Շուկայի օպերատորի կողմից շահագործվող ու սպասարկվող շուկայի կառավարման ծրագրում (ՇԿԾ):
2) Հաշվարկային ժամանակահատվածում սպառած էլեկտրական էներգիայի ընդհանուր արժեքը որոշվում է սույն պայմանագրին կից հավելված N1-ով:
3) Մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց Սպառողի կողմից սույն պայմանագրին կից հավելված N1-ում նշված վճարման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Մատակարարն իրավունքն ունի հաշվարկել տույժ չվճարած գումարից՝ օրական 0,13 %-ի չափով:
4) Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում Սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են տույժի մարմանը, հետո միայն հիմնական պարտավորության մարմանը:
5) Մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց հաշիվը ներկայացնելուց հետո 6 (վեց) աշխատանքային օրվա ընթացքում Սպառողի կողմից պաշտոնական առարկություն չստանալու դեպքում այն համարվում է ընդունված և հաստատված:
6) Մատակարարը կարող է սույն պայմանագրին կից հավելված N1-ով սահմանված էլեկտրական

էներգիայի արժեքը միակողմանի վերանայել ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում սակագների վերանայման արդյունքում, որոնք ազդում են Մատակարարի կողմից սահմանած սակագնի վրա, պատշաճ կարգով Սպառողին ծանուցելով դրա մասին:

7) Հաշիվ ապրանքագրում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը հնարավորինս սեղմ ժամկետում փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին:

4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

1) Կողմերի կողմից տրամադրման ենթակա տեղեկատվությունը չներկայացնելու, ուշացնելու, կեղծ կամ թերի տեղեկատվություն ներկայացնելու դեպքերում ցանկացած կողմ պատասխանատվություն է կրում պատճառված վնասների համար:

2) Կողմերին հայտնի դարձած ողջ տեղեկատվությունը նրանց կողմից կարող է օգտագործվել բացառապես սույն պայմանագրի կատարմանն ուղղված նպատակներով:

3) Սույն պայմանագրի կողմն իրավասու է բացահայտել գաղտնիք պարունակող տեղեկատվությունը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Կողմերը սույնով ընդունում և գիտակցում են, որ էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի՝ հրապարակային օֆերտայի համաձայն, Բաշխողը պարտավորվում է մատուցել էլեկտրական էներգիայի բաշխման ծառայություն, իսկ ԷՄԱ առևտրի մասնակիցը՝ Սպառողը, պարտավորվում է վճարել մատուցված ծառայության դիմաց:

2) Սպառողը ԷՄԱ-ում հանդիսանում է Մատակարարի սպառող և ընգրկված է Մատակարարի հաշվեկշռման խմբում:

3) Կողմերը սույնով ընդունում և գիտակցում են, որ Մատակարարի պատասխանատվությունը սահմանափակվում է Սպառողին էլեկտրական էներգիայի մատակարարմամբ, Սպառողի կողմից սպառած էլեկտրական էներգիայի սույն Պայմանագրի պայմաններով արժեքի ճշգրիտ հաշվարկով:

4) Կողմը պատասխանատվություն չի կրում, եթե ապացուցում է, որ պատշաճ կատարումն անհնար է եղել ֆորս մաժորի հետևանքով: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին: Կողմերը պարտավոր են ֆորս մաժորային իրավիճակի մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, որոնց անհաջողության դեպքում՝ դատական կարգով:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1) Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

2) Սույն պայմանագիրը լուծվում է՝

- կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
- Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին 6 (վեց) աշխատանքային օր առաջ տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
- Մատակարարի կողմից միակողմանի՝ այդ մասին Սպառողին 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ տեղեկացնելու պայմանով:

3) Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

4) Սույն պայմանագրի դադարեցումից հետո Երաշխավորված մատակարարի կողմից ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում Սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև Սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ Մատակարար չընտրելու դեպքում Հաշվարկային ամսվա ընթացքում Երաշխավորված մատակարարի կողմից Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը հաշվարկվում է այդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

5) Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

8. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

1) Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Տեղեկությունների փոխանակումն ու փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, կամ ուղարկվել են Կողմերի էլեկտրոնային փոստի հասցեով և առկա է առաքման էլեկտրոնային ծանուցումը:

2) Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների

փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

3) Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված հասցեով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հավելված N1-ը սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածն է էլեկտրաէներգիայի արժեքի, վճարման կարգի ու ժամկետների մասին:

10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Մատակարար՝	**Սպառող**
«ՏԱՎՈՒՇԷՆԵՐԳՈ» ՍՊԸ	«----------»
Հասցե՝	Հասցե՝
ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան,	----------
Աղայան 4, 4001	----------
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝
07616216	----------
Էլ. հասցե՝	Էլ. հասցե՝
tavush.energo@mail.ru	----------
Հեռախոսահամար՝	Հեռախոսահամար՝
+374 95 00 05 05	----------
Բանկ՝	Բանկ՝
«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ, «Իջևան» մ/ճ	----------
Հաշվարկային հաշվի համար՝	Հաշվարկային հաշվի համար՝
2622372942241001	----------
Տնօրեն՝	Տնօրեն՝
Նիկոլայ Ղալթախչյան	----------
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
«——» ———— 20 թ.	«——» ———— 20 թ.
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
Էլեկտրական էներգիայի մատակարարման
№ ՏԷ- պայմանագրի

Էլեկտրաէներգիայի մատակարարման արժեքը, վճարման կարգն ու ժամկետները

№ ՏԷ- պայմանագրի համաձայն սպառողը պարտավորվում է վճարել Մատակարարին սպառած էլեկտրական էներգիայի դիմաց, որի արժեքը կազմում է՝–––– դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ-ն): Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N1 հավելված) գրանցած ցուցմունքների, չափիչ տրանսֆորմատորների գործակիցների և էլեկտրական էներգիայի նշված սակագնի արտադրյալով:

Հաշվետու ամսում սպառված էլեկտրական էներգիայի դիմաց Մատակարարը հարկային հաշիվ է դուրս գրում մինչև հաջորդող ամսի 20–ը, որը Սպառողը պարտավորվում է վճարել համապատասխան փաստաթուղթը ստանալուց առավելագույնը 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

Մատակարար՝
«ՏԱՎՈՒՇԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
Տնօրեն՝
Նիկոլայ Ղալթախչյան

_____
ստորագրություն

«——» ———————— 20 թ.

Կ.Տ.

Սպառող
«–––––––––––––» ՍՊԸ
Տնօրեն՝
––––––––––––––––

_____
ստորագրություն

«——» ———————— 20 թ.

Կ.Տ.